

է Ամորի թագաւորը: Vogüé, որ իր «Les Eglises de la Terre Sainte» գործին մէջ կը յիշէ զայն, չէ կարողացած տեսնել զայն և ոչ ալ յատակագիծը հանել: Հազիւ թոյլ տրուեցաւ իրեն դուռը տեսնել. յետոյ է որ Bonfils լուսանկարեց: 1881ին գնդապետ Conder կարողացաւ տեսնել զայն և անոր նկարագրութիւնը հրատարակել. Camille Enlart յաջողեցաւ ստանալ քանի մը նօթեր, գծագրութիւններ և լուսանկարներ, բայց ներքին մասին վերաբերեալ մանրամասնութիւնները կը պակսին:

Մեծ Մզկիթը տեսակ մը պաղլիլիքա է արեւելքէն արեւմուտք երկարած, ան զրուած է այն տեղը հանդիպումովը հարաւի կողմէն մեծ պողոտային և հիւսիսի կողմէն պազարի փողոցին:

Շէնքը կամարածէ չէ: Շատ մը հատածներու (profils) բարաւորներով պսակուած ուղղանկիւն սիւներու վրայ կամարածէ աղեղներու երկու կարգեր ունի, որ կը թուի թէ յարմարած են հին եկեղեցիին թուականին և ոճին հետ: Իր նա՞ւն է արդեօք: Խնդիրը լուծելու համար պէտք է հանդարտօրէն եւ ուշադրութեամբ ուսումնասիրել այս սրբավայրը որ վերին աստիճան փոփոխուած է և ձեփերով ծածկուած:

1881ին գնդապետ Գոնտէր արեւմտեան երեք դերանամէջներուն մէջ կարծեց թէ գտած էր հին պաղլիլիքայէն մնացորդ մը, տեսաւ հոն սիւներ՝ որոնց խոյակները շատ կը նմանէին Բեթղեհէմի եկեղեցիին խոյակներուն, բայց ի մէկէն, որ բազկացած էր նեղ լուտասի (lotus) երկայն տերեւներէն: Աս իրապէս գոթական կեռճանաւոր խոյակ մ'էր 1242ին կարճ գրուման թուականին:

Արեւելեան կողմը գտաւ Խաչակիրներէն շինուած մաս մը, հին սիւնագլուխներու խմբաւորումէն կազմուած երկուորեակ սիւներու հետ, այս խումբերէն մին կը կրէր միակ գոթական խոյակ մը: Եկեղեցիին դասը կրնար ըլլալ աս, միւսնոյն թուականին նորոգուած:

Ան նկատեց նաև որմնադիրներու երկու նշաններ մին A եւ միւսն B տաշուած քարերուն վրայ գծագրուած:

Մզկիթը ունի գէպի հիւսիս, կողմնակի երկու դուռներ, պազարին փողոցին վրայ, հին սիւներ և աղբիւրներ ունեցող բակերուն առջևը: Հիւսիս-արեւելքի մուտքը ունի բիւզանդական դուռ մը. Պէրութի Ս. Յովհաննէսի զրան նման:

Գլխաւոր մուտքը արեւմտեան կողմն է, արապիկածէ բակի մը